ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Պայմանագրի համարը, ամսաթիվ ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/24/2 «13» օգոստոս 2018թ.

3. Պայմանագրի կողմը «Անուշ Պետրոսյան» ԱՁ
(անվանումը)

3. Պայմանագրի առարկան Սարքերի և սարքավորումների սպասարկման Ծառայություն

4.Պայմանագրի գումարը 2.592.500 ՀՀ դրամ

5. Պայմանագրի գործողության ժամկետը 1 տարի

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄՆԵՐ

N	Պաշտոնը	Անուն Ազգանուն	Ստորագրություն
11.	Վարչական տնօրեն	Ա. Շուշյան	
12	Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ	Վ. Մարտիրոսյան	
13	Իրավապայմանագրային բաժնի պետ	Կ. Մելքոնյան	
14	Գլխավոր հաշվապահ	Գ. Մուրադյան	
15	Մատակարարման բաժնի պետ	Ռ. Ալբերտյան	

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/24/2

ք. Երևան «13» 08 **2018թ.**

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրենի պաշտոնակատար Ա. Հովակիմյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Անուշ Պետրոսյան» Ա/Ձ-ն, (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, կնքեցին Պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սարքերի և սարքավորումների սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված Ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը հաստատվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը հաստատող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված Ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված Ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա

մատուցված Ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 2.592.500 (երկու միլիոն հինգ հարյուր ինսուներկու հազար հիմգ հարյուր) ՀՀ դրամ:

Կատարողը չի հանդիսանում ԱԱՀ վճարող:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության և հաշիվ-ապրանքագրի հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է

անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.5 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման

ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿԱՏԱՐՈՂ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Անուշ Պետրոսյան» ԱՁ	«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
ք. Երևան, Արշակունյաց 5	Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
«Ամերիաբանկ» ՓԲԸ	«Հայբիզնեսբանկ» Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1570004526880100	Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 49557658	ՀՎՀՀ 01522459
_____ Ա. Պետրոսյան	_____ Ա. Հովակիմյան
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հավելված N 1
« 13 » 08 2018 թ. կնքված
ԲԷՅ-ԳՀԾՁԲ-18/24/2 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ձեռքբերվող ծառայության նկարագիր			
Հ/Հ	Անվանում	Տեխնիկական բնութագիր	Ընդհանուր գինը՝ ՀՀ դրամ
1.	**Թանաքային տպիչների սպասարկում**		
1.1.	Epson L1300 լիցքավորում	Epson L1300 մոդելի թանաքային տպիչի լիցքավորում օրիգինալ գույներով (ընդհանուր 5 գույն, յուրաքանչյուրը ըստ անհրաժեշտության, 70մլ տարողությամբ, յուրաքանչյուր թանաք իր տուփի վրա պետք է ունենա ID, որը օգտագործվում է տպիչի լիցքավորման ժամանակ):Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1 օրացույցային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացման նույն օրը գրավոր):	6000
1.2.	Epson L800 լիցքավորում	Epson L800 մոդելի թանաքային տպիչի լիցքավորում օրիգինալ գույներով (ընդհանուր 6 գույն, յուրաքանչյուրը ըստ անհրաժեշտության, 70մլ տարողությամբ, յուրաքանչյուր թանաք իր տուփի վրա պետք է ունենա ID, որը օգտագործվում է տպիչի լիցքավորման ժամանակ):Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1 օրացույցային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացման նույն օրը գրավոր):	6000
1.3.	Epson L1300 պրոֆիլակտիկա	Epson L1300 մոդելի թանաքային տպիչի պրոֆիլակտիկա: Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-2 օրացույցային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր):	8000
1.4.	Epson L800 պրոֆիլակտիկա	Epson L800 մոդելի թանաքային տպիչի պրոֆիլակտիկա: Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-2 օրացույցային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր):	7000
1.5.	Epson L1300 տպող գլխիկի (Печатающая головка) փոխարինում	Epson L1300 տպող գլխիկի (Печатающая головка) փոխարինում:Երաշխիք՝ 365 օր	30000
1.6.	Epson L800 տպող գլխիկի (Печатающая головка) փոխարինում	Epson L800 տպող գլխիկի (Печатающая головка) փոխարինում:Երաշխիք՝ 365 օր	25000

1.7.	Epson L1300 կարգավորող ժապավենների փոխարինում	Epson L1300 կարգավորող ժապավենների փոխարինում	2000
1.8.	Epson L800 կարգավորող ժապավենների փոխարինում	Epson L800 կարգավորող ժապավենների փոխարինում	2000
2.	**Պլոտեր HP DesignJet 500 վերանորոգում և սպասարկում**		
2.1.	DesignJet 500 քարթրիջի փոխարինում	Քարթրիջի փոխարինում ներառյալ համապատասխան օրիգինալ քարթրիջը (կամ black կամ yellow կամ cyan կամ magenta):Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1 օրացույցային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր): Քարթրիջի պիտանելիության ժամկետը նվազագույնը 12 ամիս:	20000
2.2.	DesignJet 500 հիմնարար վերանորոգում	Հիմնարար վերանորոգում ներառյալ պահեստամասերը և բաղկացուցիչ մասերը: Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-7 օրացույցային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր): Երաշխիք՝ 240 օր:	50000
2.3.	DesignJet 500 ընթացիկ վերանորոգում	Ընթացիկ վերանորոգում ներառյալ պահեստամասերը և բաղկացուցիչ մասերը.որոնք ներառված չեն հայտում: Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-3 օրացույցային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր): Երաշխիք՝ 120 օր:	15000
2.4.	DesignJet 500 պրոֆիլակտիկա	Պրոֆիլակտիկա (սարքի ընդհանուր մաքրում,յուղում):Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-3 օրացույցային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր):	5000
2.5.	DesignJet 500 դիագնոստիկա	Դիագնոստիկա:Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1 օրացույցային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր):	0
2.6.	DesignJet 500 տպող գլխիկի (Печатающая головка) փոխարինում	Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-2 օրացույցային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր): Երաշխիք՝ 240 օր:	10000
2.7.	DesignJet 500 Carriage Belt փոխարինում (Ремень каретки)	Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-5 օրացույցային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր): Երաշխիք՝ 240 օր:	30000
3.	**Մոնիտորի վերանորոգում**		
3.1.	Մատրիցայի փոխարինում	Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-4 օրացույցային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր): Երաշխիք՝ 240 օր	

3.1.1.	Fujitsu Display E19W-5 կամ համարժեք	Մատրիցայի փոխարինում	10000
3.1.2.	Fujitsu Display E22T-7 կամ համարժեք	Մատրիցայի փոխարինում	10000
3.1.3.	HP W2072a կամ համարժեք	Մատրիցայի փոխարինում	10000
3.1.4.	Benq FP 72E կամ համարժեք	Մատրիցայի փոխարինում	10000
3.1.5.	Benq FP 567S կամ համարժեք	Մատրիցայի փոխարինում	10000
3.2.	Կոնդենսատորներ ի փոխարինում	Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-2 օրացույցային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր): Երաշխիք՝ 150 օր	
3.2.1.	Fujitsu Display E19W-5 կամ համարժեք	Կոնդենսատորների փոխարինում	1000
3.2.2.	Fujitsu Display E22T-7 կամ համարժեք	Կոնդենսատորների փոխարինում	1000
3.2.3.	HP W2072a կամ համարժեք	Կոնդենսատորների փոխարինում	1000
3.2.4.	Benq FP 72E կամ համարժեք	Կոնդենսատորների փոխարինում	1000
3.2.5.	Benq FP 567S կամ համարժեք	Կոնդենսատորների փոխարինում	1000
3.3.	Ինվերտորի վերանորոգում	Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-2 օրացույցային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր): Երաշխիք՝ 150 օր	
3.3.1.	Fujitsu Display E19W-5 կամ համարժեք	Ինվերտորի վերանորոգում	2000
3.3.2.	Fujitsu Display E22T-7 կամ համարժեք	Ինվերտորի վերանորոգում	2000
3.3.3.	HP W2072a կամ համարժեք	Ինվերտորի վերանորոգում	2000
3.3.4.	Benq FP 72E կամ համարժեք	Ինվերտորի վերանորոգում	2000
3.3.5.	Benq FP 567S կամ համարժեք	Ինվերտորի վերանորոգում	2000
3.4.	Ընդհանուր վերանորոգում	Ընդհանուր վերանորոգում ներառյալ պահեստամասերը և բաղկացուցիչ մասերը:Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-4 օրացույցային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր): Երաշխիք՝ 150 օր	
3.4.1.	Fujitsu Display E19W-5 կամ համարժեք	Ընդհանուր վերանորոգում	6000
3.4.2.	Fujitsu Display E22T-7 կամ համարժեք	Ընդհանուր վերանորոգում	6000
3.4.3.	HP W2072a կամ համարժեք	Ընդհանուր վերանորոգում	6000
3.4.4.	Benq FP 72E կամ համարժեք	Ընդհանուր վերանորոգում	6000
3.4.5.	Benq FP 567S կամ համարժեք	Ընդհանուր վերանորոգում	6000
3.5.	Լամպերի փոխարինում	Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-2 օրացույցային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր): Երաշխիք՝ 150 օր	
3.5.1.	Fujitsu Display E19W-5 կամ համարժեք	Լամպերի փոխարինում	3000
3.5.2.	Fujitsu Display E22T-7 կամ համարժեք	Լամպերի փոխարինում	3000
3.5.3.	HP W2072a կամ համարժեք	Լամպերի փոխարինում	3000

3.5.4.	Benq FP 72E կամ համարժեք	Լամպերի փոխարինում	3000
3.5.5.	Benq FP 567S կամ համարժեք	Լամպերի փոխարինում	3000
4.	**Սկանի ապարատի վերանորոգում**		
4.1.	Դիագնոստիկա	Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-2 օրացույցային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր):	
4.1.1.	HP ScanJet G2710	Դիագնոստիկա	0
4.1.2.	HP 300 flatbed Scaner	Դիագնոստիկա	0
4.1.3.	HP Scanjet 3800	Դիագնոստիկա	0
4.2.	Պրոֆիլակտիկա	Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-2 օրացույցային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր):	
4.2.1.	HP ScanJet G2710	Պրոֆիլակտիկա	1000
4.2.2.	HP 300 flatbed Scaner	Պրոֆիլակտիկա	1000
4.2.3.	HP Scanjet 3800 կամ	Պրոֆիլակտիկա	1000
4.3.	Ընդհանուր վերանորոգում	Ընդհանուր վերանորոգում ներառյալ պահեստամասերը և բաղկացուցիչ մասերը: Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-5 օրացույցային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր): Երաշխիք՝ 150 օր	
4.3.1.	HP ScanJet G2710	Ընդհանուր վերանորոգում ներառյալ պահեստամասերը	5000
4.3.2.	HP 300 flatbed Scaner	Ընդհանուր վերանորոգում ներառյալ պահեստամասերը	5000
4.3.3.	HP Scanjet 3800	Ընդհանուր վերանորոգում ներառյալ պահեստամասերը	5000
4.4.	Սնուցման բլոկի փոխարինում	Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1 օրացույցային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր): Երաշխիք՝ 180 օր	
4.4.1.	HP ScanJet G2710 կամ համարժեք	Սնուցման բլոկի փոխարինում	4000
4.4.2.	HP Scanjet 3800 կամ համարժեք	Սնուցման բլոկի փոխարինում	4000
4.5.	Սնուցման բլոկի վերանորոգում	Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-2 օրացույցային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր): Երաշխիք՝ 150 օր	
4.5.1.	HP ScanJet G2710	Սնուցման բլոկի վերանորոգում	2000
4.5.2.	HP Scanjet 3800	Սնուցման բլոկի վերանորոգում	2000
5.	**Անխափան սնուցման սարքերի վերանորոգում**		
5.1.	Անխափան սնուցման սարքի վերանորոգում	Անխափան սնուցման սարքի վերանորոգում: Ծառայությունների մատուցումը իրականացվում է 1-2 օրացույցային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր): Երաշխիք՝ 180 օր	
5.1.1.	PoweCom War 600A	Անխափան սնուցման սարքի վերանորոգում	500
5.1.2.	PowerCom RPT 600	Անխափան սնուցման սարքի վերանորոգում	500
5.1.3.	PoweCom BNT 600A	Անխափան սնուցման սարքի վերանորոգում	500
5.1.4.	PowerCom PowerCom BNT-1500AP	Անխափան սնուցման սարքի վերանորոգում	500
5.1.5.	Apc smart ups 1500va sua1500rmi2u	Անխափան սնուցման սարքի վերանորոգում	4000
5.1.6.	Intex IT 725 Ups	Անխափան սնուցման սարքի վերանորոգում	500
5.1.7.	APC Smart-UPS 2200VA	Անխափան սնուցման սարքի վերանորոգում	6000
5.2.	Անխափան սնուցման սարքի	Անխափան սնուցման սարքի մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոց(ներ)ը: Ծառայությունների մատուցումը	

	մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոց(ներ)ը	իրականացվում է 1-2 օրացույցային օրվա ընթացքում (ծառայության մատուցման հայտի ներկայացումից հետո գրավոր): Երաշխիք՝ 280 օր	
5.2.1.	PoweCom War 600A	Անխափան սնուցման սարքի մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը	5000
5.2.2.	PowerCom RPT 600	Անխափան սնուցման սարքի մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը	5000
5.2.3.	PoweCom BNT 600A	Անխափան սնուցման սարքի մարտկոցի փոխարինում ներառյալ մարտկոցը	5000
5.2.4.	PowerCom PowerCom BNT-1500AP	Անխափան սնուցման սարքի 2 մարտկոցների փոխարինում	12000
5.2.5.	Apc smart ups 1500va sua1500rmi2u	Անխափան սնուցման սարքի 4 մարտկոցների փոխարինում օրիգինալով, 12V, 9 A	40000
5.2.6.	Intex IT 725 Ups	Անխափան սնուցման սարքի մարտկոցի փոխարինում	6000
5.2.7.	APC Smart-UPS 2200VA	Անխափան սնուցման սարքի 4 մարտկոցների փոխարինում օրիգինալով, 12V, 17 A	50000
Ծառայության մատուցման վայրը		ք. Երևան Զ. Անդրանիկի 1 («Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ, «Հարավային» մ/ճ), ք. Երևան Բագրատունյաց 6 («ԷՕԿՏ» մ/ճ), ք. Սևան Էներգետիների 4 («Արևելյան» մ/ճ), ք. Գյումրի Ղարսի խճուղի 25 («Արևմտյան» մ/ճ), ք. Գորիս Արևմտյան խճուղի 1 («Գորիս» մ/ճ), ք. Կապան Գործարանային 15 («Զանգեզուր» մ/ճ), ք. Վանաձոր Թևոսյան 2 («Հյուսիսային» մ/ճ)	
Ծառայության մատուցման ժամկետը		Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 1 տարի	

Այլ պայմաններ

Այցը Պատվիրատուին կատարվում է Ծառայության մատուցման հայտի գրավոր ներկայացման նույն օրը: Մարզերում գտնվող մասնաճյուղերում սպասարկումը կատավում է 3(երեք) օրացուցային օրվա ընթացքում: Պարտադիր այց է կատարվում մարզերում գտնվող մասնաճյուղեր 3(երեք) ամիս մեկ: Մարզերում Պատվիրատուի կողից ներկայացուցչի ներկայությունը պարտադիր պայման է: Բոլոր ծառայությունները պետք է մատուցվեն ժամանակին և որակյալ: Բոլոր պահեստամասերը պետք է լինեն նոր, չօգտագործված և որակյալ: Անհրաժեշտությունից ելնելով ծառայությունների մատուցումը կատարվում է Կատարողի համապատասխան արհեստանոցներում, որի դեպքում սարքավորումների տեղափոխումը կատարվում են Կատարողի ուժերով և միջոցներով: Ծառայության ընթացքում օգտագործվող պահեստամասերի արժեքները մտնում են Պայմանագրի ընդհանուր գնի մեջ:

Կատարողը պետք է ունենա համապատասխան սերտիֆիկացված մասնագետներ սարքավորումների վերանորոգման սպասարկման և այլ ծառայությունների մատուցման համար: Նախատեսել այցելություն նույն օրը (ք. Երևանում) տարբեր հասցեներ և ընկերության մասնաճյուղեր:

ԿԱՏԱՐՈՂ
«Անուշ Պետրոսյան» ԱՁ
ք. Երևան, Արշակունյաց 5
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570004526880100
ՀՎՀՀ 49557658

Ա. Պետրոսյան
(ստորագրություն)

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

Ա. Հովակիմյան
(ստորագրություն)

Հավելված N 2
«13» 08 2018թ. կնքված
ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/24/2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հանձնման-ընդունման արձանագրության և հաշիվ-ապրանքագրի երկկողմ հաստատման օրվանից հաշված մինչև 15 աշխատանքային օրվա ընթացքում:ճ

ԿԱՏԱՐՈՂ
«Անուշ Պետրոսյան» ԱՁ
ք. Երևան, Արշակունյաց 5
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570004526880100
ՀՎՀՀ 49557658

Ա. Պետրոսյան
(ստորագրություն)

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

Ա. Հովակիմյան
(ստորագրություն)

Հավելված N 3
«13» 08 2018թ. կնքված
ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/24/2 ծածկագրով պայմանագրի

ԿԱՏԱՐՈՂ
«Անուշ Պետրոսյան» ԱՁ
ք. Երևան, Արշակունյաց 5
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570004526880100
ՀՎՀՀ 49557658

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Կատարողը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ Ծառայությունները՝

N	Մատուցված Ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Հավելված N 3.1
«13» 08 2018թ. կնքված
ԲԷՑ-ԳՀԾՁԲ-18/24/2 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը հաստատելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված Ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն